

Կալիֆորնիայի գործազրկության ապահովագրությունը (California Unemployment Insurance) և ձեր լեզվական իրավունքները

Եթե դուք իրավասու եք գործազրկության ապահովագրություն (Unemployment Insurance, UI) ստանալու Կալիֆորնիայում և հիմնականում խոսում եք ոչ թե անգլերեն, այլ ուրիշ լեզվով, դուք պետք է իմանաք նոր և առկա լեզվական ծառայությունների մասին Զբաղվածության զարգացման վարչությունում (Employment Development Department, EDD), որը կառավարում է UI-ի նպաստները:

Դուք իրավունք ունեք ստանալ լեզվական ծառայություններ EDD-ից, որպեսզի ձեր UI հայցը և վճարումներն ուղղակիորեն հասանելի լինեն ձեզ համար: Դուք չպետք է վճարեք որևէ մեկին, որպեսզի ձեր փոխարեն զբաղվի ձեր UI հայցով: Մասնավոր ծառայություններից օգտվելը չի հանգեցնի ավելի արագ վճարման և կարող է ձեզ խարդախության վտանգի ենթարկել:

Երբ ներկայացնում եք UI-ի հայց, դուք իրավունք ունեք.

- Պահանջել և ստանալ ծառայություններ ձեր նախընտրած լեզվով, երբ շփվում եք EDD-ի անձնակազմի հետ հեռախոսով կամ անձամբ բազմալեզու անձնակազմի կամ պրոֆեսիոնալ թարգմանչի միջոցով:
 - Զանգահարել 1-800-300-5616 հեռախոսահամարով և պահանջել թարգմանչական ծառայություն ձեր նախընտրած լեզվով:
- Եթե ծառայություններ փնտրելու պահին թարգմանություն ապահովելը հնարավոր չէ, EDD-ը պետք է կապվի ձեզ հետ ձեր նախընտրած լեզվով 5 աշխատանքային օրվա ընթացքում, սահմանափակ բացառություններով:

Դուք նաև իրավունք ունեք.

- Պահանջել, որ UI փաստաթղթերը թարգմանվեն ձեր նախընտրած լեզվով:
- Որպեսզի UI փաստաթղթերը բարձրաձայն ընթերցվեն բազմալեզու անձնակազմի կամ պրոֆեսիոնալ թարգմանիչների միջոցով ձեր նախընտրած ժեստերի կամ բանավոր լեզվով, նույնիսկ եթե դուք ստացել եք գրավոր թարգմանություն: Հարցերի դեպքում դիմեք EDD-ի աշխատակիցներին պարզաբանումների համար:

Սկսած 2022 թվականի ամռանից.

- Դուք կկարողանաք նշել ձեր նախընտրած գրավոր և բանավոր կամ ժեստերի լեզուն անմիջապես ձեր UI հայցում:
- UI ծրագրի անձնակազմից կպահանջվի ստուգել ձեր հայցի լեզվական նախապատվությունները և տրամադրել լեզվական ծառայություններ՝ առանց ձեր կողմից դրանք նախապես պահանջելու:

Սկսած 2022 թվականի ձմռանից.

- Դուք կկարողանաք զանգահարել EDD-ին UI-ի հայցերի վերաբերյալ հատուկ հայերեն հեռախոսագծով:
- Դուք կկարողանաք մուտք գործել UI հիմնական փաստաթղթեր և հայերեն թարգմանված ծանուցումներ www.EDD.ca.gov կայքում:

Հիշե՛ք. Դուք իրավունք ունեք պահանջել UI ծառայություններ *ցանկացած* լեզվով, որն առավել հարմար է ձեզ համար, նույնիսկ եթե ձեր լեզուն չի երևում EDD-ի կայքում կամ այլ ծանուցումներում: Չանգահարեք 1-800-300-5616 հեռախոսահամարով և խնդրեք թարգմանչական ծառայություն ձեր նախընտրած լեզվով:

Խնդրում ենք կիսվել այս թռուցիկով ձեր համայնքում: EDD-ը շարունակում է բարելավել լեզվական ծառայությունները՝ հիմնվելով փաստաբանների և ձեր համայնքի նման համայնքների արձագանքների վրա:

Եթե դժվարանում եք ստանալ UI ծառայություններ ձեր նախընտրած լեզվով, կամ եթե ունեք գաղափարներ՝ հետագայում բարելավելու լեզվի հասանելիությունը, խնդրում ենք կապվել՝

- Asian Americans Advancing Justice - Asian Law Caucus: (415) 896-1701
- California Rural Legal Assistance, Inc. (CRLA): (661) 854-3839

- Center for Workers' Rights: (916) 905-1625
- Legal Aid Foundation of Los Angeles (LAFLA): (800) 399-4529